Նոտարական ակտի կոդ: 641-20231025-37-7413366
Նոտարական ակտի գաղտնագիր: AV78N3

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետություն քաղաք Երևան
Երկու հազար քսաներեք թվականի հոկտեմբերի քսանհինգին

Հայաստանի Հանրապետության Վաղարշապատ համայնքը ի դեմս համայնքի ղեկավար ԴԻԱՆԱ ՄՆԱՑԱԿԱՆԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ, ծնված՝ 22/03/1988թ-ին, ՀԾՀ՝ 7203880206, կենսաչափական անձնագիր՝ BA1938367, տրված՝ 001-ի կողմից, 13/05/2015թ-ին, հաշվառված՝ ԱՐՄԱՎԻՐ, ՎԱՂԱՐՇԱՊԱՏ, ՎԱՂԱՐՇԱՊԱՏ, ՍԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉԻ Փ., 35Տ հասցեում, **առաջին տեղակալ ԱՐՍԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ**, ծնված՝ 11/07/1983թ-ին, ՀԾՀ՝ 2107830070, անձնագիր՝ AP0618833, տրված՝ 057-ի կողմից, 07/11/2016թ-ին, հաշվառված՝ ԱՐՄԱՎԻՐ, ՎԱՂԱՐՇԱՊԱՏ, ԲԱՂՐԱՄՅԱՆ Փ., 18ԱԾ, 21ԲՆ հասցեում, ով գործում է համաձայն "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 2-րդ մասի, /հիմք՝ 16.10.2023թ. ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ղեկավարի թիվ 133 կարգադրություն/, **ում անունից որպես լիազորված անձ հանդես է գալիս ՀՀ քաղաքացի ԼԻԱՆԱ ՍԵՐԳԵՅԻ ԲԱՐԲԱՍՈՎԱՆ**, ծնված՝ 02/07/1986թ-ին, ՀԾՀ՝ 5207860321, անձնագիր՝ AS0260807, տրված՝ 057-ի կողմից, 04/07/2018թ-ին, հաշվառված՝ ԱՐՄԱՎԻՐ, ՎԱՂԱՐՇԱՊԱՏ, ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ Փ. 2 ՓԿՂ., 9Տ հասցեում, երկու հազար քսաներեք թվականի հոկտեմբերի քսանհինգին համայնքի ղեկավարի կողմից տրված թիվ 5982 համարի լիազորագրի հիման վրա, **այսուհետ՝ Կողմ-1/Վարձատու,** մի կողմից, և

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ» Պետական մարմինը, հասցե՝ ՆՈՐՔ-ՄԱՐԱԾ Ա.ԱՐՄԵՆԱԿՅԱՆ Փ. / 129, գրանցման համար՝ 273.184.1052988, ՀՎՀՀ՝ 00481699, **ի դեմս ղեկավար՝ ՍԼԱՎԻԿ ՍԱՐԳՍՅԱՆԻ**, ծնված՝ 29/12/1977, ՀԾՀ՝ 3912770166, անձնագիր՝ 000756148, տրված՝ 004-ի կողմից 03/12/2012թ-ին, հաշվարված՝ ՁՈՐԱՂԲՅՈՒՐ ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆ 19 ԹՂՄ. / 10 / 15 ԲՆ, ով գործում է կանոնադրության հիման վրա, /11.08.2023թ. ՀՀ Վարչապետի թիվ 837-Ա որոշում, **ում անունից որպես լիազորված անձ հանդես է գալիս ՀՀ քաղաքացի ՍԱԹԵՆԻԿ ԽՈՐԵՆԻ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԸ,** ծնված՝ 01/09/1994թ-ին, ՀԾՀ՝ 5109940541, նույնականացման քարտ՝ 014455141, տրված՝ 008-ի կողմից, 30/05/2022թ-ին, հաշվառված՝ ԵՐԵՎԱՆ, ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ, ԱՐԱՐԱՏՅԱՆ 1 ՁՆԳՎ., 8, Շ, 41ԲՆ հասցեում, երկու հազար քսաներեք թվականի հոկտեմբերի քսանհինգին Ընկերության կողմից տրված լիազորագրի հիման վրա, **այսուհետ՝ Կողմ-2/Վարձակալ,** մյուս կողմից, և

Վարչապետի աշխատակազմի ղեկավարը ի դեմս Արայիկ Հարությունյանի, ում անունից որպես լիազորված անձ հանդես է գալիս ՀՀ քաղաքացի ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՌԱԶՄԻԿԻ ՄԿՐՏՈՒՄՅԱՆԸ, ծնված՝ 06/05/1970թ-ին, ՀԾՀ՝ 1605700096, նույնականացման քարտ՝ 009432626, տրված՝ 008-ի կողմից, 24/05/2018թ-ին, հաշվառված՝ ԵՐԵՎԱՆ, ԵՐԵՎԱՆ, ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ, ՐԱՖՖՈՒ Փ., 35, Շ, 27ԲՆ , ով հանդես է գալիս 25 հոկտեմբերի 2023թ. Վարչապետի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված թիվ 02/19.32/36918-2023 լիազորագրի հիման վրա, **այսուհետ՝ Կողմ-3/վճարող կողմ,** միասին անվանվելով Կողմեր,

հիմք ընդունելով 11 հունիսի 2018թ. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ» կանոնադրությունը հաստատելու մասին ՀՀ Վարչապետի թիվ 755-Լ որոշումը և 17 դեկտեմբերի 2014թ. "Տեսչական մարմինների մասին" ՀՀ օրենքի 18-րդ հոդվածը, համաձայն որի Տեսչական մարմնի ֆինանսավորումն իրականացվում է վարչապետի աշխատակազմի միջոցով պետական բյուջեով նախատեսված ծախսերի շրջանակում: Տեսչական մարմնի կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների ֆինանսավորումն արտացոլվում է բյուջետային հայտում և պետական բյուջեում՝ առանձին տողով, որի կապակցությամբ Կողմ-3/Վճարողը տալիս է իր համաձայնությունը Տեսչական մարմնի ֆինանսավորումն իրականացնելու վերաբերյալ, և 27 սեպտեմբերի 2023թ. ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ղեկավարի թիվ 1742-Ա որոշումը և ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու թիվ 79-Ա որոշումը, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Կողմ-1/Վարձատուն վճարի դիմաց Կողմ-2/Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնում է սեփականության իրավունքով համայնքին պատկանող՝ **ՀՀ, մարզ Արմավիր, համայնք Վաղարշապատ քաղաք, Մ. Մաշտոցի փողոց, 0 վարչական շենք հասցեում գտնվող անշարժ գույքից՝ 5263.85** /հինգ հազար երկու հարյուր վաթսուներեք ամբողջ և

ութսունհինգ/քմ մակերեսով շենք շինություններից՝ 2-րդ /երկրորդ/ մասնաշենքի 4-րդ /չորրորդ/ հարկից՝ **թիվ II.4/21 տարածքը՝ 11.7 /տասնմեկ ամբողջ և յոթ/քմ մակերեսով տարածքը, այսուհետ՝ Օբյեկտ,** մուտքը և ընդհանուր օգտագործման տարածքներն՝ ընդհանուր օգտագործման իրավունքով, որոնց նկարագիրը տրված է ՀՀ Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 19032019-04-0054 վկայականում, տրված 19 մարտի 2019թ-ին, ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից:

1**.2 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված Օբյեկտի հատակագիծը կցվում է սույն պայմանագրին և համարվում է նրա անբաժանելի մասը:**

1.3 Սույն պայմանագիրը կնքելու պահին **1.1 կետում նշված Օբյեկտը գրավ դրված չէ, արգելանքի և կալանքի տակ չի գտնվում, տարածքի մի մասը հանձնված է հասարակական վարձակալության և հասարակական անհատույց օգտագործման, այլ գրանցված սահմանափակումներ չկան,** համաձայն Անշարժ գույքի միավորի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ N ՄՏ-25102023-04-0002 միասնական տեղեկանքի, որի տվյալները լրացված են 25 հոկտեմբերի 2023թ. դրությամբ՝ ՀՀ Անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

5263.85քմ. շենք շինություններից՝ 5184.05քմ. գաղաքապետարան, 79.8քմ. ծածկ:

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ՝

0.4841 ընդհանուր հողամասի նկատմամբ ունի 105277/118248 բաժնեմասով սեփականության իրավունք: ՀՀ Հարկային օրենսգրքի 236-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջների համաձայն, օտարման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումը կկատարվի հաշվառող մարմինների կողմից տրված անշարժ գույքի մասով հարկային պարտավորություններ չունենալու վերաբերյալ տեղեկանք ներկայացնելու դեպքում, բացառությամբ այն դեպքերի, երբ օտարումը կատարվում է հարկադիր կատարման ծառայության, սնանկության կառավարչի կամ գրավառուի կողմից: «Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքի 4-5-րդ և 7-րդ հոդվածների համաձայն՝ գույքի օտարման գործարքների դիմաց որոշակի սահմանաչափերը գերազանցող գումարն անկանխիկ չվճարելու դեպքում տվյալ գործարքներն առոչինչ են:

2. Պայմանագրի գործողության ժամկետը

2.1 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված **Օբյեկտը Կողմ-1/Վարձատուն պարտավորվում է հանձնել Կողմ-2/Վարձակալին մինչև 01/11/2023թ. /մեկը նոյեմբերի երկու հազար քսաներեք թվականը**/:

2.2 **Սույն պայմանագիրը գործում է մինչև 31.12.2025թ. /երեսունմեկը դեկտեմբերի երկու հազար քսանհինգ թվականը/:**

3. Վարձավճարը և վճարման կարգը

3.1 Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն պայմանագրի **1.1 կետում նշված Օբյեկտի ամսական վարձավճարը կազմում է յուրաքանչյուր քառակուսի մետրի համար 700 /յոթ հարյուր/ ՀՀ դրամ, ընդհանուր՝ 8.190 /ութ հազար հարյուր իննսուն/ ՀՀ դրամ, ներառյալ հարկատեսակը, որը պարտավորվում է վճարել Կողմ-3/Վճարող կողմը:**

3.2 Վարձակալը սույն պայմանագրի 3.1 կետում նշված վարձավճարը պարտավորվում է վճարել բանկային փոխանցմամբ Վարձատուի կողմից ներկայացված բանկային հաշվեհամարին՝յուրաքանչյուր ամսվա համար՝ մինչև հաջորդ ամսվա 15 /տասնհինգը/:

4. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

4.1 Կողմ-1/Վարձատուն պարտավոր է՝

4.1.1 Կողմ-2/Վարձակալին հանձնել սույն պայմանագրի 1.1 կետին համապատասխան Օբյեկտ.

4.1.3 Կողմ-2/Վարձակալին նախազգուշացնել սույն պայմանագրի 1.1 կետում նշված Օբյեկտի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների մասին:

4.2 Կողմ-1/Վարձատուն իրավունք ունի՝

4.2.1 եթե Կողմ-2/Վարձակալը պայմանագիրը դադարելուց հետո չի վերադարձրել Օբյեկտը կամ այն վերադարձրել է ժամկետի խախտմամբ՝ պահաջել վարձավճար կետանցի ողջ ժամանակահատվածի համար,

4.2.2 դատական կարգով վաղաժամկետ լուծել պայմանագիրը, եթե Վարձակալն էականորեն վատթարացրել է Օբյեկտի վիճակը, սույն պայմանագրի 2 կետով նախատեսված կարգով, չափով և ժամկետներում չի մուծել վարձավճարը:

4.3 Կողմ-2/Վարձակալն իրավունք ունի՝

4.3.1 եթե Կողմ-1/Վարձատուն Կողմ-2/Վարձակալին հանձնել է սույն պայմանագրի 1.1 կետին չհամապատասխանող Օբյեկտ, պահանջել հանձնելու համապատասխան Օբյեկտ կամ հրաժարվել հանձնված Օբյեկտից:
4.3.2 Կողմ-1/Վարձատուից պահանջել վերացնել բոլոր այն թերությունները և բացթողումները, որոնք խանգարում են Վարձակալին իրականացնել իր իրավունքները, եթե այդ թերությունները և բացթողումները հնարավոր է վերացնել և դրանց վերացման աշխատանքները դրված են Վարձատուի վրա կամ դրանք վերացնել իրավասու է միայն Վարձատուն:
4.4 Կողմ-2/Վարձակալը պարտավոր է՝
4.4.1 Խնայողաբար և պատշաճ օգտագործել Օբյեկտը, պահպանել Օբյեկտի և նրա շրջապատի մաքրությունը.
4.4.2 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված օբեկտն օգտագործել նպատակային նշանակությանը համապատասխան.
4.4.3 Կողմ-2/Վարձակալը պարտավոր է կատարել տարածքի անհրաժեշտ վերանորոգման աշխատանքներ, իսկ վերանորոգման ծախսերը ենթակա չեն հատուցման:
4.4.4 ապահովել Կողմ-1/Վարձատուի անարգել մուտքը սույն պայմանագրի 1.1 կետում նշված Օբյեկտ՝ դրա զննման և ստուգման համար,
4.4.5 սույն պայմանագրի ժամկետը լրանալու օրվանից սկսած 10 /տասը/ օրյա ժամկետում համապատասխան ակտով գույքը հանձնել Ենթավարձատուին:
4.4.6 Օբյեկտը հանձնել Կողմ-1/Վարձատուին այն վիճակով ինչ վիճակով ընդունել է այն, հաշվի առնելով բնականոն մաշվածությունը.
4.4.7 **Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից սկսած 1.1 կետում նշված Օբյեկտի հետ կապված բոլոր տեսակի կոմունալ, բացառությամբ աղբահանության պարտավորությունները կատարել իր կողմից մինչև սույն պայմանագրի դադարումը:**
4.5 Կողմ-3/ Վճարող կողմը պարտավոր է՝
4.5.1 ժամանակին վճարել Օբյեկտն օգտագործելու համար սույն պայմանագրի 3-րդ կետում նախատեսված վարձավճարը.
4.6 Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ դադարեցվել, Կողմերից մեկի կողմից մյուս Կողմին նախօրոք՝ 2 /երկու/ ամիս առաջ այդ մասին գրավոր տեղեկացնելով՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցություն (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

5.1 Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:
5.2. Կողմերը ազատվում են սույն պայմանագրով սահմանված իրենց պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման պատասխանատվությունից, եթե դա հետևանք է այնպիսի հանգամանքի, որը
5.2.1. արտակարգ և անկանխելի է,
5.2.2. հաղթահարելը տվյալ պարագայում Օբյեկտիվորեն անհնարին է եղել,
5.2.3. իր բնույթով արտակարգ է հասարակական հարաբերություններում,
5.2.4. անկանխելի է եղել Կողմերի իրավահարաբերությունների համար,
5.2.5. ազդում է Կողմի պարտավորության կատարման վրա:
5.3. Այլ բան ապացուցված չլինելու դեպքում, սույն պայմանագրով իրական ռիսկը, ջրհեղեղը, սողանքը, փոթորիկները, հրդեհները, հրաբխային ժայթքումները, ցանկացած տեսակի հիվանդության, վարակի տարածումը կամ դրա տարածման իրական ռիսկը, արտակարգ դրության հայտարարումը, ռազմական դրության հայտարարումը, քաղաքացիական ընդվզումները, պատերազմները, կառուցապատման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների գործունեության կասեցումը կամ խաթարումը, կառավարման մարմինների (իշխանության) փոփոխությունը, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների օրինական կամ ապօրինի գործողությունները, իրավական ակտերի ընդունումը, աշխատողների կողմիցհամընդհանուր գործադուլների իրականացումը:
5.4. Սույն պայմանագրի 5.3. կետում սահմանված հանգամանքների առկայության դեպքում Կողմը չի ազատվում պայմանագրով ստանձնած պարտավորության կատարումից, սակայն պարտավորության կատարումը կարող է հետաձգվել կողմերի համաձայնությամբ մինչև արտակարգ դրության ավարտը:
5.5. Պարտականությունների խախտումը պարտապանի կոնտրագենտների կողմից, շուկայում անհրաժեշտ ապրանքների կամ պարտապանի մոտ անհրաժեշտ դրամական միջոցների բացակայությունը օրենքի ուժով չեն կարող համարվել անհաղթահարելի ուժ:
5.6. Եթե անհաղթահարելի ուժը տևում է ավելի քան երեք ամիս, Կողմերից յուրաքանչյուրն

իրավունք է ստանում հրաժարվել պայմանագրից՝ գրավոր կերպով ծանուցելով մյուս կողմին:

6. Եզրափակիչ դրույթներ

6.1 Սույն պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից ծագող իրավունքները՝ պետական գրանցման **երեսուն աշխատանքային օրվա ընթացքում:**
6.2 Սույն պայմանագրում կատարված փոփոխությունները և լրացումները օրինական են միայն այն դեպքում, եթե դրանք կատարված են գրավոր, ստորագրված են Կողմերի կողմից, վավերացված են նոտարի կողմից և գրանցված են անշարժ գույքի կադաստրի պետ. կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում:
6.3 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը կարող է կատարվել ՀՀ օրենքով սահմանված կարգով հաշտարարության և/կամ դատարանի միջոցով:
6.4 Պայմանագրի նոտարական վավերացման հետ կապված ծախսերը կատարվում է Վարձակալի կողմից:
6.5 Կողմերը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գույքային պատասխանատվություն են կրում իրենց պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:
6.6 Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով **4 /չորս/** օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Մեկ օրինակը պահվում է ԵՐԵՎԱՆ նոտարական տարածքի նոտարի գործերում, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, իսկ մյուս օրինակը տրվում է ներկայացնելու Անշարժ Գույքի Կադաստրի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանում՝ գրանցելու համար:
6.7 Նոտարի ներկայությամբ պայմանագիրը ստորագրող կողմերը հայտարարում են, որ իրենք գործունակ են, ամբողջովին գիտակցում են և հասկանում պայմանագրով նախատեսված բոլոր կետերի իմաստը և նշանակությունը, ինչպես նաև հայտարարում են, որ պայմանագիրը ստորագրում են կամավոր և իրենց համար ձեռնտու պայմաններով:
6.8 Պայմանագիրը կողմերի համար բարձրաձայն ընթերցվեց նոտարի կողմից և պարզաբանվեցին օրենսդրությամբ գործող նորմերը:
6.9 Սույն պայմանագրի օրինակների միջև հակասություն առաջանալու դեպքում նախապատվությունը տրվում է նոտարական գրասենյակում պահվող օրինակին:

7. Կողմերի ստորագրությունները

Կողմ-1/ՎԱՐՁԱՏՈՒ
Հայաստանի Հանրապետության Վաղարշապատ համայնքը
համայնքի ղեկավար ԴԻԱՆԱ ՄՆԱՑԱԿԱՆԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ
առաջին տեղակալ ԱՐՍԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
լ/ա ԼԻԱՆԱ ՍԵՐԳԵՅԻ ԲԱՐԲԱՍՈՎԱ

Կողմ-2/ՎԱՐՁԱԿԱԼ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ» ՊՄ
ղեկավար՝ ՍԼԱՎԻԿ ՍԱՐԳՍՅԱՆԻ
լ/ա ՍԱԹԵՆԻԿ ԽՈՐԵՆԻ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Կողմ-3/ Վճարող կողմ
Վարչապետի աշխատակազմի ղեկավարի
ի դեմս Արայիկ Հարությունյանի
լ/ա ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՌԱԶՄԻԿԻ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

Երկու հազար քսաներեք թվականի հոկտեմբերի քսանհինգին սույն պայմանագիրը վավերացված է իմ՝ **ԵՐԵՎԱՆ** նոտարական տարածքի նոտար **ԼԻԼԻԹ ԱՍԱՏՈՒՐԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՍ** կողմից:

Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը, գործունակությունը, ինչպես նաև իրավաբանական անձանց իրավունակությունը, նրանց ներկայացուցիչների լիազորությունը և անշարժ գույքի նկատմամբ Վարձատուի իրավունքները ստուգված են:
ՀՀ Քաղ. օր-ի 611 հոդվածի համաձայն, սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում՝ երեսուն աշխատանքային օրվա ընթացքում:

Գրանցված է սեղանամատյանում թիվ 4065 ով:

Գանձված է պետական տուրք հինգ հազար ՀՀ դրամ և ծառայության վճար տասնհինգ հազար ՀՀ դրամ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Լիլիթ Ասատուրի Մուրադյան

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության կառավարության
աշխատանքի անվտանգության գործակալության
կոմիտեի նախագահի 20.10.2016թ. N 284-Ն հրամանով

ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Էջմիածին համայնք

Անուն, ազգանուն կամ անվանում

Գյուղ՝ Էջմիածին

Հասցե՝ Մ.Մաշտոց 0

Մասշտաբ 1:200



2-րդ հատ. կ-հարկ

52177637
ԱՐԱՅԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ
ԱՐԱՅԻ ՄԱՇԱՆՅԱՆ
ARAYI MANUKYAN
ARAYI MASHANYAN